ՍԱՂՆԱՊԱՏԻ ՎԱՆՔ

Սաղնապատի Ս. Գրիգոր Վանքը կը գտնուէր Վանէն վեց կիլոմեթր հեռու, դէպի հարաւարեւելք, Վարագայ լերան ստորոտը։ Միրձակայ ձորին մէջէն կը հոսէր Ջանապատ կոչուած յորդ աղբիւրը։ Ամառուան եղանակին, օդն ու ջուրը սքանչելի ըլլալուն, շատեր Վանէն այնտեղ կ՚երթային օդափոխութեան. — Ե. Լալայեան, Վասպուրական, Նշանաւոր Վանքեր, էջ 64։

Ունէր երկու Եկեղեցի, Ս. Աստուածածին և Ս. Կարապետ, և բաւական լաւ երկյարկանի սենեակներ։ Շրջապատուած էր պարիսպով. — Լալայեան, Վասպ., Նշ. Վանքեր, էջ 67։

Շատեր Սաղնապատի Վանքին հետ նոյնացուցած են անոր մօտ գտնուող և աւելի հին Ձորովանքը. — Հ. Հ. Ոսկեան, Վասպուրականի Վանքերը, Ա., էջ 257։

Ցաղնապատի կամ Սաղնաձորի Ս. Գրիգորի Վանքը երբեմն ալ կոչուած է, մօտիկը գտնուող գիւղին անունով, Կողբանից վանք. — Ոսկեան, Ա., էջ 259–60։

Սաղնապատի Վանքին և անոր առաջնորդներուն մասին կան պատմական հետեւեալ տեղեկութիւնները։

Ղեւոնդ Տոսպեցիի համաձայն, «ՉԹ (1260) շինեցաւ նոր ի նորոյ Սաղնապատայ սուրբ Կարապետ Եկեղեցւոյն, որ է ի Տոսպ գաւառի. այս վանք այժմ Ս. Գրիգոր յորջորջի ի յետնոցս». — Դիւան, Ժ., էջ 493։ Ոսկեան, Ա., էջ 262։

Ա. — Կիրակոս Եպս. Սաղնապատայ, 1441ին մասնակցած է Էջմիածնի ժողովին. — Թ. Մեծոփեցի, Յիշատակարան, էջ 52։

Բ. — Ստեփանոս Արքեպս. Գօզալ, 1457–70. — Նօտարք, էջ 186. Լալայեան, Ցուցակ Ձեռ. Վասպուրականի, էջ 460։

Մկրտիչ Աբեղայ, Գրիչ, 1481–5, Սաղնապատի մէջ կ՚օրինակէ,

1. — Աւետարան, 1481ին. — Ոսկեան, Ա., էջ 264։

2. — Աւետարան, 1485ին, Տանուտէր Յակոբի համար. — Բարխուդարեանց, Արցախ, էջ 148։

Գ. — Ստեփանոս Եպիսկոպոս, 1559–70։ Իր Վանահայրութեան միջոցին, 1559ին, Վանեցի Մելիք-Ղուլիջան և իր որդիները կը վերանորոգեն, ի միջի այլոց, Ս. Աստուածածնի տաճարը. — Լալայեան, Վասպ., Նշ. Վանքեր, էջ 68։

Մխիթար Վրդ. Գրիչ եւ Ծաղկող, 1570ին, Սաղնապատու Վանքին մէջ աւարտած է Աւետարան մը, Տիկին Մարգարիտի պատուէրով. — Լալայեան, Ցուցակ Ձեռ. Վասպուրականի, էջ 671–4։

Դ. — Յովասափ Եպիսկոպոս, 1628–42. — Լալայեան, Վասպ., Նշ. Վանքեր, էջ 67։

Ահագին երկրաշարժ մը, 1648 Ապրիլ 2, Աւագ Ուրբաթ գիշերը, կը կործանէ, ի միջի այլոց, Սաղնապատի Վանքին մեծ եկեղեցին, որ կը մնայ աւերակ. — Ա. Դաւրիժեցի, էջ 489, 492։

Ե. — Աբրահամ Վարդապետ, 1859, շատ մը շինութիւններ կատարած է վանքէն ներս. — Արծուի Վասպուրականի, 1859, էջ 174։ Ոսկեան, Ա., էջ 262, 265։

Զ. — Թադէոս Ծ. Վրդ. Վասպուրականցի, 1866. — Նօտարք, էջ 162։

Է. — Եղիշէ Վարդապետ, 1868. — Լալայեան, Վասպ., Նշ. Վանքեր, էջ 67։

Ը. — Կիւրեղ Վրդ. Փիլաւեան, 1883–4, որուն օրով Կ. Կամսարական շինել կուտայ քանի մը սենեակներ. — Ոսկեան, Ա., էջ 265։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Շնորհակալութեամբ ստացանք Տիար Վահէ Սէքեանէ 10 տինար յորդանանեան, Ձեռագրաց Ցուցակի հրատարակութեան ծախուց հաշուոյն:

Տեսուչ Ձեռագրատան Ս. Աթոռոյ
ՆՈՐԱՅՐ ԵՊՍ.

digitised by A.R.A.R.@